աթոռակալութե. սբ. Գեղարդեանն Դաւիթ սրբազան եպսի., որդի ազատաց եւ մեծ ազգէ»(*)։ Սորա ժամանակ 1655 թուին «Սուլէ որդի Թաղայի յազգէ Զիթաղի ի քաղաքէն Թփխիսի» նորոգում է «զկաթուղիկէս» ի յիշատակ Բէկի-Սուլթանին, իւր ամուսին Դերջանին, Ստեփանոս որդուն ևն., նուիրելով

Պատկեր 174ա.

նաև արծաթի կանթեղ և հոգալով վառելու մշտական ծախսը (Ցաւել. Ա. 118. պատկ. 142)։ Այս նորոգութիւնը յամենայն դէպս դրան շրջանակին եւ զարդարանքներին չեն վերաբերում, որ աւելի հնագոյն արուեստի՝ սելջուկեանին զուգահեռ՝ դրոշմ են կրում,

(*) Ձեռագիրը դեռ չի համարակալուած. յիշատակարանի համար պարտական ենք մատենադարանի վարիչ Սենեքերիմ Տ. Յակոբեանի սիրալիրութեան։

ինչպէս կարելի էր մակաբերել արձանագրութեան տեղից դատելով, այլ, հաւանօրէն, գմբէթին միայն։ Մի և նոյն անձը նուիրաբերութիւններ ունի Սևանում և ուրիշ վանքերում։ Սորա յաջորդն էր եղբայրը՝ Ստեփանոս եպիսկոպոս, որ վախճանուեց 1679 թուին Երեւանում երկրաշարժի ժամանակ, ապա Դաւիթ փոքրը նոյն Պռոշեան տոհմից, որ ՌՃԽԵ (= 1696) թուին նորոգում է երկրաշարժից վնասուած վանքը, իսկ «ՌՃԽԸ դարբասին ձեռն տուինք». 1689 թուին նորոգում է Գեղարդի պահարանը, իսկ 1698ին Նոյեան տապանի տախտակի պահարանը(*)։ Առաքելի որդի

(*) Խաղբակեանք 257-262։ Ձեռ. էջմ. № 449 նժ (Ցաւելուած Բ. 39)։